ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

14 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 6 անդամներ:

Բացակա էին՝ Մեխակ Մեխակյանը, Գոռ Մկրտչյանը, Վարդան Սամսոնյանը, Էդիկ Տիգրանյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Մանուկ Հովհաննիսյան, Սեդրակ Սաֆարյան, Սամվել Գարսեվանյան , Մարոզ Սարիբեկյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Հունան Ռուբենյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Մարոզ Սարիբեկյանը

Լսեցին
ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի ԹԻՎ 2 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 17 -րդ հոդվածի, համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Ակունք համայնքի ավագանու 2020 թվականի փետրվարի 14 -ի թիվ 2 արտահերթ նիստի օրակարգը

1. Համայնքային սեփականության ավտոկայանատեղի կառուցելու նպատակով հողամաս գնելու մասին :
2. Համայնքային սեփականության ավտոկայանատեղի կառուցելու նպատակով հողամաս տրամադրելու մասին
3.Ակունք համայնքի ավագանու 2019թվականի դեկտեմբերի 13-ի N61-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
4.Ակունք համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը օտարելու մասին

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 9/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՄԱՍ ԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, հիմք ընդունելով «Վարմօն ռիելթի»սահմանափակ պատասխանատվության ընկերության կողմից գույքի գնահատման թիվ «037-01/Վ-020» հաշվետվությունը, համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Համայնքային սեփականություն հանդիսացող ավտոկայանատեղի կառուցելու նպատակով գնել Ակունք համայնքի գյուղ Ակունք Կենտրոնական խճուղի 90/1 հասցեի, ծածկագիր 07-009-0050-0008, 1400 քառակուսի մետր բնակելի կառուցապատման հողամասը 3 030 000 դրամով:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 10/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի,համայնքի ավագանին որոշում է՝

1. Ակունք համայնքի Ակունք գյուղում համայնքային սեփականության ավտոկայանատեղի կառուցելու նպատակով տրամադրել առանց մրցույթի,անհատույց(մշտական) օգտագործման գյուղ Ակունք Կենտրոնական խճուղի 90/1 հասցեի 0. 24838 հա համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման հողամասը :

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 11/

Լսեցին

ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի N 61 -Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼՈՒՍԻՆԵ ՉՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի,համայնքի ավագանին *որոշում է* '

1.Ակունք համայնքի ավագանու 2019թվականի դեկտեմբերի13-ի «Ակունք համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 61-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1)որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն հավելվածի :

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից :

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 12-Ն/

Լսեցին

ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՐՈՂ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ/

Համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի18-րդ հոդվածի1-ին մասի21-րդ կետի, համայնքի օգտագործման սխեմային համապատասխան,հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը, համայնքի ավագանին *որոշում է*՝

1.Թույլատրել համայնքի ղեկավարին ուղղակի վաճառքի միջոցով օտարել համայնքային սեփականություն հանդրսացող 0.0399 հա բնակավայրի նշանակության ,բնակելի կառուցապատման հողամասը, հասցեն՝ Ակունք համայնք գյուղ Կոտայք..,ծածկագիրը .....,ուղղակի վաճառքի գին սահմանել 496 000 դրամ :

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 13/

Ավագանու անդամներ

ԱՎԱԳ ԱՎԱԳՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՂՎԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ

ԱՐՍԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՀՈՒՆԱՆ ԴՈՒԲԵՆՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Մարոզ Սարիբեկյանը